

■
■

Source gallica.bnf.fr / Bibliothèque nationale de France

Varoujan, Daniel (1884-1915). :. 1906.

1/ Les contenus accessibles sur le site Gallica sont pour la plupart des reproductions numériques d'oeuvres tombées dans le domaine public provenant des collections de la BnF. Leur réutilisation s'inscrit dans le cadre de la loi n°78-753 du 17 juillet 1978 :

*La réutilisation non commerciale de ces contenus est libre et gratuite dans le respect de la législation en vigueur et notamment du maintien de la mention de source.

*La réutilisation commerciale de ces contenus est payante et fait l'objet d'une licence. Est entendue par réutilisation commerciale la revente de contenus sous forme de produits élaborés ou de fourniture de service.

Cliquer [ici pour accéder aux tarifs et à la licence](#)

2/ Les contenus de Gallica sont la propriété de la BnF au sens de l'article L.2112-1 du code général de la propriété des personnes publiques.

3/ Quelques contenus sont soumis à un régime de réutilisation particulier. Il s'agit :

*des reproductions de documents protégés par un droit d'auteur appartenant à un tiers. Ces documents ne peuvent être réutilisés, sauf dans le cadre de la copie privée, sans l'autorisation préalable du titulaire des droits.

*des reproductions de documents conservés dans les bibliothèques ou autres institutions partenaires. Ceux-ci sont signalés par la mention Source gallica.BnF.fr / Bibliothèque municipale de ... (ou autre partenaire). L'utilisateur est invité à s'informer auprès de ces bibliothèques de leurs conditions de réutilisation.

4/ Gallica constitue une base de données, dont la BnF est le producteur, protégée au sens des articles L341-1 et suivants du code de la propriété intellectuelle.

5/ Les présentes conditions d'utilisation des contenus de Gallica sont régies par la loi française. En cas de réutilisation prévue dans un autre pays, il appartient à chaque utilisateur de vérifier la conformité de son projet avec le droit de ce pays.

6/ L'utilisateur s'engage à respecter les présentes conditions d'utilisation ainsi que la législation en vigueur, notamment en matière de propriété intellectuelle. En cas de non respect de ces dispositions, il est notamment passible d'une amende prévue par la loi du 17 juillet 1978.

7/ Pour obtenir un document de Gallica en haute définition, contacter reutilisation@bnf.fr.


Գրուեց "Սարսուռներ" յառաջագոյն յարկաւ
Արշակունիք

ՍԱՐՍՈՒՌՆԵՐ

ՔՆԱՐԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՔ

ԵՐԳԵՑ

ՊԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՆԻՔԷԼ



ՎԵՆԵՏԻԿ — Ս. ՂԱԶԱՐ

1906

ԿՐ ԶՅՆԵՄ

ԽՈՐԻՆ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ

ՄՈՒՐԱՏ ԵՒ ՌԱՓԱՅԷԼ

ԲԱՐԵՐԱՐՆԵՐՈՒ

ԱՆՄԱՀ ՅԻՇԱՏԱԿԻՆ



1008-

123837

ACQ 1993004823

Ս Ա Ր Ս ՈՒ Ռ Ն Ե Ր

ՄՈՒՍԱՅԻՆ

— « Թեւերս, ուղիղ դէպ ի բարձունքսդ վրսեմ՝
Քնարսդ կ'ուզեն, կ'ուզեն քնարդ. երկընցո՛ւր:
Կը արտփէ մէջս երգերու սաղմն. կը սպասեմ.
Ե՞րբ պիտ' տրբուի անոր ծնուցիչ քու համբոյր:

Երգե՛լ կ'ուզեմ. — Թող սարսրոայ բընութիւնն
Մատերուս տակ, ինչպէս մօր ծիծն հոլանի՝
Մանկան առջի բընագդական դրպչելուն.
Եւ կեանքը Թող շըրթունքիս վրայ լուծանի:

Երգե՛լ կ'ուզեմ. — որտաներն. ի՞նչ կ'ըսեն մեզ,
Կ'առնէ խօսք մ' հոփն ամպէն, հոփէն ալ՝ շաղաց.
Բան ունի աստղն. — երգել, երգե՛լ կ'ուզեմ ես,
Զի կը խօսին երգով Բնութիւնն ու Աստուած:

Կ'ուզեմ ծովուն հետ սիրտս սըրտի ես յարիւլ,
Իմ անհունիս մէջ այդ անհունը Թաղել.
Բունն իդձն ունիմ մըրըրկին հետ մաքառիւլ,
Եւ գլուխս էին գաղտնիքներուն դէմ բախել:

Գըրուած է Սէրն՝ վարդին, Հաւատքն՝ աստղին վրայ.
Զանոնք հեզել կ'ուզեմ քնարի շըրթունքով.
Կ'ուզեմ բնութիւնն յօրինել քօղ մը ծաղկեայ՝
Մտածման ամէն ձեւ իր ներքեւ քօղելով:

Տո՛ւր, ո՛վ Մուսայ, տո՛ւր այդ քնարսդ բըռնած.
Պիտ' իմին սիրտս, իմին աշխարհս ըլլայ ան՝
Ուր գաղափարն՝ պիտի բնակի գերդ Աստուած,
Վե՛հ գաղափարն աչքերով բո՛ց, Թուխքով լանջն:
Սարսուռներ

Անոր վերայ պիտի հալի խանդն հոգւոյս,
 Անոր վերայ պիտի սիրաս յար քրտարնի,
 Ինչպէս կարմիր և սարսըռուն արշալո՛յս
 Մը՝ սէզերուն, հասկերուն վրայ գարունի :

Պիտի այդ քնարը կապէ իմ շըրթներուն
 Ժողովուրդին շըրթունքը հուր, սիրագին,
 Եւ պիտի այդ համբոյրն ըլլայ բունն, անհուն,
 Համբոյրին պէս՝ տըրուած ծովէն եզերքին :

Երգերն անոր պիտի պատմեն Սարսուռներ՝
 Մարմնաւորած իմ արիւնէս, շարժումէս,
 Ներշնչելով ասոցեր, փուշի ակօսներ,
 Ուր, հողմակոծ, պիտ՝ ծըլի վիշտն աղէկէզ :

Պիտի մտնչեն զարհուրանքները կեանքին՝
 Մէ՛ջը սուզած՝ արդարութեան, բարութեան.
 Սըրբազան քնար, պիտ՝ լարերն իր մրկըրտուին՝
 Մարտիրոսուած եղբայրութեան աւազանն :

Ո՛վ սուրբ Մուսայ, Մուսայ մատաղ, լանջաբաց,
 կարծես դեռ նո՛ր ձըզած աստղէ օրոցքդ հուր.
 Ո՛վ վարդ կոյս, դո՛ւ, ժողովուրդին խոստացուած,
 Լայն սէրերո՞ւ դու խոստացուած, քնարըդ սո՛ւր :

Երիտասարդ՝ բայց շուտ ճանչցած շատ բաներ՝
 Գի՛րկըդ կու գամ երագելու առանձին.
 Մէկդի թողած եմ ժըպիտ, խաղ ու պարեր,
 Նորընծայ եմ գաղափարի աշխարհին :

Թիւերս, ուղիդ դէպ ի բարձունքըդ վըսեմ՝
 Քնարըդ կ'ուզեն, կ'ուզեն քնարդ. երկընցո՛ւր :
 Կը տրուիէ մէջս երգերու սաղմն. կը սպասեմ.
 Ե՛րբ պիտ՝ տըրուի անոր ծնուցիչ քու համբոյր » :

Այսպէս ըսի : — Եւ պատասխանն աղէկէզ՝
 Մուսան՝ վերէն հովին յանձնեց դէպ ինձի.
 — « Տենչիդ ըզգո՛յշ, այս քնարս է շինուած, տե՛ս,
 Սեւ նոճիէ, փթթում մահուան աւիշի :

Թըշուան հոգի, անոր լարերն են բերուած
 Փետրուարու զանգուրներէն որբերուն.
 Կ'երթան երգերն, հեհեւալով, սըրընթաց,
 Ուր որ կ'երթայ սաքը բոպիկ՝ խեղճութիւնն:

Հեռու ասկէ. — զիտցած ըլլաս՝ որ այս քնար՝
 Քամահրանքով պիտ' անտեսնն ձերիներ. —
 Զի օտարին սակո՞յն քով իսկ՝ ձեր գոհար՝
 Աչքերնուդ շո՞ղ մըն ալ, ըստէպ, չի ցայտեր:

Պիտի զոցէ իրենց ալիքը բուստերդ,
 Էւ փուշերու, եղիճներու մոխիրով
 Պիտի թաղեն կայծերն հոգւոյդ բոցակերտ՝
 Նըւագներուդ ողբը քեզի՞ դարձնելով:

Հեռատես՛. ապագայդ խիստ մըթին է.
 Հեռատես՛. գերեզման մ'է ապագայդ. —
 Խանձարուրէդ պիտի օրոցք մը չելլէ.
 Պիտ' չը գրանես միջոց թռիչքիդ համեմատ:

Փողովուրդի՞ն ըլլալ կ'ուզես՝ մօ՛րդ չեղած.
 Մնողքիդ արցունքը քու դարձիդ կը սպասէ.
 Արեւմուտքի մէջ ծաղիկներդ ընձիւղած
 Պիտի խորշակն Արեւելքի ազագէ:

Մըտածումի, ըզգացումի այս ճամբուն՝
 Խընդի արեւը չէ սըփուած իր շէկ բաշ.
 Հոն կը շըրջի Արովեանի մ' հէգ ուրուն,
 Հոն Գուրեանն է լացած, տըխրած Պէշիկթաշ:

Ի՛նչ, կ'ուզես քնարն, որուն շանթերը մէջի՛
 Պիտի հաճոյ չը մըւընչեն շատերուն.
 Ռուն վրայի բողն է սեւ բող մը խեղճի,
 Թէպէտ ըլլայ մէջն արշաւոյս մը շողուն:

Ի՛նչ, այս քընարը կ'ուզես, քնար սե՛ փայտէ՛. —
 Այս՝ վէրքերու գործի մըն է, այս է հուր.
 Ապագայդ է, այս՝ դագաղդ է, անո՛ւնդ է »: —
 Էս, անյողգողդ, ըսի անոր.

— Ալլայ, տո՛ւր: —

ՀԱՅՐ, ՕՐՀՆԷ՛

Հայր իմ, օրհնէ՛. ժամը հասաւ. պիտ' երթամ.

Նոր կեանք մ' ինծի կը սպասէ:

Պատանութիւնն ես թողուցի. նոր արիւն

Երակիս մէջ կը փազէ:

Յառա՛ջ, յառա՛ջ. — զըլուխս ես չեմ դարձընէր.

Երկընդէս փա՛ր թող իյնան

Անվիշտ կեանքիս ամէն աստղեր. հոգրս չէ՛.

Անցեալս իջնայ թող դամբան:

Օհ, ինծի՛ ի՛նչ՝ թէ կը փետեմ փարդին թերթ,

Եւ փուշին կեանք կու տամ միշտ,

Թէ զըրկարաց յորձանքին մէ՛ջ կը նետուիմ. —

Խինդս է՛ ձանձրոյթ, սէրս է՛ վիշտ:

Ամէն խայտառք ջախջախեցի սրբախ մէջ. —

Չեմ վախնար սեւ ծրծեկէ.

Վանք մըանող կոյս մ' եմ՝ որ խըզուած իր վարսեր՝

Անխիղճ, անհոգ, կը դիտէ՛ . . .

Հայր, ես կ'երթամ այն ճամբայէն՝ որ ճերմակ

Մագերուդ զիս կը տանի,

Վաստակաբեկ ոսկըրներուդ, ծեր սրբախ

Եւ սէրերուդ կենդանի . . .

Բաւական է. — աշխատեցար, կըրեցիր.

Ամէն նետի, հարուածի,

Վահան եղար ինծի համար. հոգիդ է՛

Որ հոգևոյս մէջ կը յածի:

Իմ արիւնս է գոյացած քու քըրախներէդ. —

Յոգնութեանդ ծիլն եմ արխուր:

Հոգիդ, կաղնի՛, երբ կուրծք կու տար մըրըրկին՝

Ես շուքին տակ, հանդիսա, լուս

Կը մեծնայի: — Հարկ է հիմայ ա՛լ հանդէս
Եւ ես քեզի յաջորդեմ . . .

Խոնջէ՛նք, խոնջէ՛նք. — Ա՛ռգեմ կըռուիլ, աշխատիլ,
Ելլել կեանքին, կեանքին դէմ . . .

Հայր իմ, օրհնէ՛, զողորմ ձեռքերդ զըլխուս դիր.
Թող մատերէդ կաթի վար

Աղօթքդ՝ եկած հոգւոյդ պայծառ խորանէն:
Վերջին ժամն է. օրհնէ՛, հայր:

ՁԻՒՆԷ ԴԱԳԱՂԸ

Հոս կը պառկի: — Ոսկի ձեղուն չը կայ վրան.
Եւ պատեր պերճ, դիպակագարդ, անտասան՝
Ցուրտը դըրսի՝ ներսի տաքէն չեն բաժնիր.

Նըկարնորէ նըկար մրափուն իր աչքեր
Հեշտ երազի մ՝ ետեւէն չեն թափառիր.
Ետտանւոյն վըրայ հաշուէն չի վառիր:

Հոս կը պառկի: — Քուն մըն է այդ՝ որ երբեք
Պիտ՝ չը բանայ իր այդ զոցած աչքերն հէզ.

Գիշեր մըն է՝ որուն արգանդը մուկի
Պիտ՝ չյըզանայ արշաւոյս մ՝ իսկ՝ որ փըթթի:

Ան իր զըլուին հըռըլաիւնով վար դըրաւ,
Եւ աղօթքով ալ պիտի վեր չառնէ բնաւ: —

Երէկի ձիւնն անոր դագաղ մ՝ է ճերմակ,
Այսօրուան ձիւնն ալ՝ կափարիչ մ՝ ըսպիտակ. —

Բնութիւնն ուզեց այդ մարմընոյն մերժըւած
Պատըսպարան մը նըլիրել, ո՛հ, առանց

Մըտածելու թէ գերեզման մը կու տայ:

Հէ՛զ մուտրած, սա գինեաան մօտակայ
Դըռնէն ելաւ, և անգիտակ, խօլ, ինքնին,
Ինկաւ դըրան առջեւ սա պալատին:

Արբեցած էր: Ձիւնի մէջ ըլլա՛ւ չըզգաց.

Արդէն հիւզին ան ո՛ր խորշն էր ջերմ գրտած:

Հոս չը կար վիշտ, չը կար լալօնը մանկան,

Եւ ողբը մօր ա՛լ անկարող դիեցման.
 Չը կար խեղդուկ ձեղուն, խաւար և բորբոս,
 Չը կար մըրուրն առկայծ ճրագին. — լաւ էր հոս: —

Լա՛ւ էր այս տեղ: —

Սառ բուրգին տակ եղաւ սառ,
 Եւ սա քարէ սեմին վըրայ դարձաւ քար,
 Հոն դընեւով ահուելութի՛ւնը կեանքին.
 Եւ իր ուրուն պըտըտցնելով՝ ներս հեշտին
 Նընջողներուն երագին մէջ, իբր ոձ մի՛
 Ար զինք ճընշող զաւազանին կ'սլորաի:

Ա՛լ բնութիւնն այս իր խորթ սրդին ընկեցիկ
 Մուացօնքի մէջ թող պատէ. թող մարդիկ
 Վաղն՝ այս իրենց խեղճ աքացածը տանին
 Լըռութեան ծոցն — երկրորդ աշխարհը մերին —
 Երագանքի համար է մեր օրօքանն,
 Աւ անկողինն՝ յոյզի, շիրիմն՝ լըռութեան . . .
 Դէմքն հեզութեամբ մը դարձած է երկընքին՝
 Աւրկէ շող մ' իսկ չինկաւ անդունդն իր կեանքին.
 Աւրկէ խուսած մէկ կաթիլ մ' իսկ կապտագոյն՝
 Չը միացաւ իր սվկիան սեւերուն.
 Մինչ շատերուն անծիր գըմբէ՛թ խընդութեան,
 Իրեն համար նեղ առաստաղ մ' եղաւ ան.
 Եւ չը սըփոեց լոյս մ' իր քայլին այցելու՝
 Որ, մուրաձ, կ'երթար եղտիւրն ախտերու,
 Այդ երկինքն, ո՛հ, աըւաւ անոր օրերուն
 Սեւ հիւղ մը լսկ, և դիակին՝ ճերմակ ձիւնն:

. . . Պիտի փայլի վաղն արեգակն անոր վրայ,
 Այդ մեծ ճըրագն որ կոյր երկրիս լոյս կու տայ.
 Եւ պիտի ձիւնը շողշողայ ցուրտ մարմնոյն՝
 Պըտոյտքելով անոր դեռ սե՛ւ մագերուն,
 Ինչպէս ճերմակ եղեամն հովէն կը թըրթոսայ՝
 Սեւ վեհութեամբ կանդուն նոճի մը վըրայ:
 Վաղը, ժողվուած վառարանի մը չորս դին
 Մինչդեռ ժըպտով մը որդիներն հարուստին

Գիրկերէ զիրկ պիտի կայտուն, — ըստորեւ,
 Հոն հիւղին մէջ, ցուրտ անկողնի մը առջեւ՝
 Որ դատարկ է, ինկղծին արդաքն անխընայ
 Պիտի ճըւան. — « Հայրի՛կն, հայրիկը չը կայ »: —

Ո՛վ լրքուածներ փողբիկ, հօթի, ցըրտահար,
 Պիտի այլե՛ւրս չը դառնայ ձերին հայր.
 Թերեւս առանց ողբացուելու ձեզմէ՛ զայն
 Փութկոտօրէն մուսցումի հողին տան. —
 Զի մարդըս անքան կը շատապէ՛ մէջտեղէն
 Վերցընելու իրեն նըմանը արդէն:
 Ան հոն է, հոն, հետո՛ւն մեծ տան մը սեմին՝
 Ա՛լ անկենդան տարածուած է իր մարմինն:
 Հոն սրգաւոր աչք մ՛ իսկ չը կայ՝ որ գինը լայ. —
 Գագաղի ծածքը սեւ չիյնար իր վըրայ:
 Յաւէրժօրէն գիշերն իջաւ ծոցին մէջ.
 Թոյլ երակները չունին ա՛լ ելեւէջ.
 Յուրան իր ներսի՛ դուրսի ցուրտին միացած՝
 Խեղճն քրին մարդ մը սատայցէ յօրինուած.
 Սեւ քուրջերուն, կընճիւններուն մէջ ճակատին
 Կը քընանայ կարծես սոսկունն ահագին.
 Կէ՛ս բաց շըրթներն (ձիւնէ ահօս դէմքին վրայ)
 Կ՛ըսեն կարծես. — « Ինձ զերեզման մ՛ալ չը կայ »: —

Պիտի բացուին դըններն հիմայ պալատին.
 Պիտի միանայ ծիծաղ մ՛ հիմակ այս սուգին:
 Ոտքի ծայրով՝ դիակը ցուրտ, վըշտակիր՝
 Պիտի շարժեն և պիտի՛ ըսեն. — « Արթընցի՛ր »: —
 Եւ իր զըլուխն աստիճանէն մարմարեայ
 Սալյատակին քարին, անշունչ, պիտի՛ իյնայ . . .

(Ո՛հ, ս՛վ Տէր Իմ, Տէր անայլայլ, անվորդով,
 Է՞ր կը փըշրես ալիքն՝ եկող ալիքով.
 Է՞ր կը յանձնես տերեւը՝ դուժ մըրըրկին,
 Լերան աւազն՝ հեղեղներուն մուկգին.
 Է՞ր կը մատնես մարդը՝ մարդուն կեղեքման
 Եւ հէզ ճակատը՝ ոտքերու յաղթական):
 Օ՛ն, արթընցի՛ր: — Եւ պիտի ան նընջէ դեռ:
 Պիտի ըսեն. — « Հողին արեւք. չը խըմէ՛ր »: —

Ի՞նչ, չը խումէ՞ր: — Ոճիր մ'է այդպէս խորհիւ
 Գառառաան մ'է քարէ սրբալի, մըաքի շիւ:
 Մենք, անճնապօւրծ, հաւուն վըրայ Չըրհերձիկ՝
 Անոր համար ուսման լասա մ' իսկ վըշրեցինք,
 Եւ արդ կ'ապշինք չը գըանելնու համար զայն՝
 Հոս, ծաղեգերքն ազատութեան, փըրկութեան:
 Անգէտ մանուկ մըն էր առաջ՝ որ ամէն
 Մեր անարդար թողլըքումի շարժումէն՝
 Սահմըուակելով իջաւ դէպ ի ցուրտ պատրանք.
 Ու երէկուան հէզ մերժըւածն (այս զիանա՞ք)
 Այսօրուան կոյր կորսըւածն է՝ զոր կ'աւան:
 Այն հօթի աղան՝ որ կը վըմտուէր մեր գըունէն՝
 Այս մուրաժ մարդն է, որ մեր սեմին վրայ՝
 կը դանայ Վրէժը սըրբազան և հըսկայ:
 Ան՝ մեր հրածն է, որ խոցոտ քան թէ զինով,
 Հոս տեղ ինկա՛ւ, պատէ ի պատ երթալով:
 Ի՞նչ, մաքրափայլ շիթը պըզտօր սղխին վրայ
 կը կաթեցնէք, և կ'ուզէք ալ պայծա՞ն մուայ:
 Թարմ տունկին չէ՞ք տար ուտգունն կենսական,
 Սիւքի համբոյրն, լայսի հեղե՛ղը գարնան,
 Եւ կ'ուզէք ալ՝ որ հողմափար, ազազուն,
 Անցըին վըրայ չը կառչի՞ ձեր սաքերուն:
 Աղքատութիւնն բզմարդ կ'ընէ ախտաւոր.
 Բիւր զինովին ինն հազարն են չըքաւոր:
 Զիրենք մուցոդ աշխարհն մոռնալ կը ճըզնին՝
 Աւըսլի մէջ խեղդելով կեանքը վըշաին:
 կ'ուզեն իրենց հառաչին մէջ ու լըքման,
 Եւ լացին խորն իրենց կընոջ և մանկան՝
 Գըանել ցնորքի մը երազներն սատապէ
 Եւ խինդ մ' որ թոյլ սղեղը լսկ կը խարէ՛:
 կ'ուզեն քօղեր ձըգել իրենց աչքերուն՝
 Որ չը կարդան ճակատագրին սողն-արիւն,
 Որ չը տեսնեն մուրնչոդ ալիքն սաքի տակ,
 Եւ զըլխու վրայ՝ գիշերուան սեւն այլանդակ.
 Որ չը տեսնեն նոյն իսկ զիրենք, սե՛ւ, թաղուած
 կիսով չափ խո՛րը դամբանի մ' մըթամած,
 Կըման լացոդ ուռենիի մ' որ, տըկար,
 կ'իջեցընէ գըլուխը մութ վըհէն վար:

Եւ այսպէս, ս'հ, նրման շուքին, սարսուտին՝
 Հորիզոնէն դողըղաւով կը սահին։
 Զիրենք յիշող լոկ կը ձրգեն, մերկ, անտէր,
 Խոնաւ հիւղին մէջ վիժած, փո'քը անդամներ.
 Տաւով (արխո'ւր ժառանգ՝ որ միշտ կը մընայ)
 Իրենց անցեալն՝ անոնց իրրեւ ապագայ։
 Կ'երթան, կ'երթան փուշի մէջէ և ձիւնի. —
 Փուշին վըրայ կը սըրսկեն շիթն արիւնի
 Բաց վէրքերէ, և ձիւնին վրայ կը թողուն
 Կաղապարներն իրենց նիհար, ցուրտ մարմնոյն։
 Կ'անցնին, կ'անցնին մութի մէջէ, եղեամի,
 Յուսաւով միշտ հանգըսաութեանը շիրմի . . .

Մինչ դո'ւ, ս'վ մարդ, պատուհանիդ առջեւ, գոհ,
 Կը ժրպարս ցուրտ պըսոյաքներուն ձիւնին . . . ս'հ,
 Անոնք, անդէտ, կը ծածկեն, հո'ն, քիչ մ' հեռուն,
 Մարմինն եղբորդ՝ որ կը հրծծէ. — Գըթութիւն։ —

ԴԱՍՏԻԱՐԱԿ

Գասարարակն է. — Կը խօսի ծանր, յըսակ.
 Զայնն ասաղերէն, լոյսէն կու դայ։
 Բառը կ'եւէ, թրուիչներուն վրայ հուր կայ.
 Զայն կ'արձակեն իրենց բոյնէն զիրքն ու կեանք։
 Թոր կը սպառէ, միաց կը լըւկէ, շունչ կու տայ,
 Եւ չի խորհիր իր վէրքերուն.
 Մանկութեան դէմ զըրած ամբողջ ծերութիւնն՝
 Կը բաժնէ իր ծովը բազում լըճի վրայ . . .
 Վըսեմ կոչում։ — Հոգեակներու մէջ հըլու,
 Ըզգուշաւոր հըպումներով՝
 Կը զըրէ գութն էջերու վրայ ապահով.
 Կը ցանէ սէրն՝ անձնութիւնն քաղելու։
 Անոնց կոկոն ուղեղին մէջ կիտարաց
 Կը զեանդէ ճառագայթներ,
 Եւ կը լեցնէ խաւերն անոր՝ բարեբեր
 Իր զիտութիւնն Աստուծոյ մէջ ամփոփած։

Եւ հաւարած ամանին շուրջն իր սրբախն

Մանկան շրթներ՝ որք կը ծրծեն,
 Կը բաշխէ, հեզ, անոնց արիւն արիւնէն. —
 Այդ իր կեանքն է՝ որ կ'անցընէ ուրիշին:

Եւ այսպէս օր մ' երբոր ըլլայ զո՛հ մը, ծեր,

Մեռնելու մօտ և հոգեվարք,
 Պիտ' մընայ լսկ անոր այս մեծ մխիթարանք՝
 Թէ՛ իր կեանքն իր սաներուն մէջ կ'ապրի՛ գեռ:

ՀԱՇԻՇ

Սիրաւ լեցուն է բանախն խաւարով.

Ա՛լ դաշտ ու երկինք չը կան իր համար.

Պիտ' գընէր աչքի հազար գոհարով՝

Ասորդ մ'ան նոյն խոկ՝ ասուպ ալ ըլլար:

— « Օ՛ն, հաշիշ բերէք, կը մըրմընջէ ան,
 Երբ աշխարհս ինծմէ այսպէս կ'ապշուպեն,
 Ես կ'ուզեմ հոգւոյս մէջ ըստեղծել զայն. —
 Օրօրուիլ, բուժի՛լ հըզօր ցընորքէն.

Օ՛ն, հաշիշ բերէք »: — Եւ ան կը ծրխէ,
 Իբր սրախուժեան ըստի՛նքը ծրծէր.

Կը հոսի երազ ջըլերուն մէջէ.

Աշխարհը լուծուած կ'ելլայ սիրան ի վեր:

Աչքերը բանախն գիմաց կը զսցուին՝

Ապարանք մ' իր մէջ զըմանելու համար.

Բիբերն հըրաժեշտ կու տան խաւարին՝

Ասողեր բերելու խոստումով ճարտար:

Եւ կը քընանայ արուեստի քունով՝

Ինչպէս խըղճի խայթն՝ աղօթքէ մը վերջ.

Ո՛վ թըշուառ հոգի, հիմայ ապահով,

Ազատ է և աէր՝ ցընորքներուն մէջ.

Եւ կ'երազէ շա՛տ, շատ բաներ աղուոր

Կամ յաւիներն ալ աղուոր կ'երազէ. —

Բըռնած շրդթայի մ' օղակն ահաւոր՝

Կընոջ մը մանեակը զայն կը կարծէ:

Վարդէ, ոսկիէ զերի մ' ափն ի վար
 Իր մանկան խաղին կը ժըպտի հիմայ.
 Կամ ինքն իսկ մանուկ՝ լըճակին մէջ յար
 Երկինքն՝ երկընքին մէջ զինք կը տեսնայ:

Շըրթունքները լուռ, մեղմիկ կը դողան՝
 Անշուշտ ուրիշներ գըտնալնուն համար.
 Թերեւս (ո՞վ գիտէ) կը լըրացնէ ան
 Համբոյր մ' ասենով թողուած կիսկատար.

Կամ կը շըրջի արան՝ ազատ քայլերով.
 Կը վայլէ երկինքն, աստղերու արգանդ:
 Մի՛ արթընցընէք, քանզի ասլահով
 Ձինք կը փոխադրէք լոյս աշխարհէն՝ բանա:

Թողէք քընանայ... թող հաշիշին մէջ
 Սեւ շըղթան բեկտի՝ վիշաք լուծելով:
 . . . Ո՛վ անմահ մեկոն, երազի առէջ,
 Դու ցընորքն հիւսէ ոսկեղէն թելով.

Հիւսէ խընդութիւն մը անըրջական
 Իր խոցուած հոգոյն, ուղեղին վըրայ.
 Ժըպիտն աղուո՞ր է, եթէ նոյն իսկ ան
 Խաբուած ջըղերու վիժանձն ալ ըլլայ:

ՏՂԱՔ, ՆԵՐԵՑԷՔ

Մի՛, մի՛ ձեծէք: — Ի՛նչ, խառնակե՞ց ձերին իրող.
 Կամ թէ անգէտ և դիպուածով, մըտազբաղ,
 Ձեր զընդակի՞ն զարկաւ ոտքով մէկէն մէկ.
 Թափե՞ց մեւանը թուղթերնուդ. — Ներեցէք:

Ո՛հ, ներեցէք, զի հայ մըն է, մեր եղբայր.
 Ո՛հ, ներեցէք, զի արկար է, ցաւազար.
 Բնութիւնը այդ խեղճ էակն է անտեսներ. —
 Չէ թափած իր կազդուրող հիւթն և ուժեր՝
 Անոր մարմնոյն, և իր բոցերն՝ հոգիին.
 Կոյր մ'է եղած անոր, մինչդեռ դայեակ մ' հին
 Ձեզ շատերուդ: —

Աւզի շիթ մ'է այդ տղան՝

Որ հկաւ հոս՝ մեր շուտանքին, նենգութեան
 Մէջ ընելու իր սեւ շրջանն արցունքով,
 Թողէք այդ աստղը, հանդարտիկ, անվարդով,
 Իր հորիզոնն իջնէ, առանց գանիկայ
 Ասուպ 'նելու, թէպէտ արեւ ալ չըլլայ:
 Թրշուան ծաղիկ գերեզմանի, արխրութեան.
 Ո՛հ, փոթորկէ փոթորիկ մի՛ յուզէք զայն,
 Այսինքն՝ խօշ բարկութենէ բարկութիւն.
 Ինչպէս դուք, ան ալ սիրտ մ'ունի ըզգայուն:
 Հակած ճակատն ու հայուածքները աղօտ,
 Ամէն քայլին՝ վարանուճիկները վախկոտ,
 Էւ արցունքներն, որոնք կախած շրթներուն
 Կը թափթըփին, կ'ըսեն ձեզի. — Գրթութի՛ւնս. —

Երբ ծիծաղէ դուք նոր ծիծաղ կը թրւչիք՝
 — Ինչպէս, գարնան աչքը ծաղկէ ի ծաղիկ —
 Խորշ մը քաշուած՝ անիկայ սեւ կը ծրծէ,
 Այդ զըրկըւածը խայտանքէ, բըրբիջէ,
 Այդ վրախա սիրտն, այդ թոյլ ճաճանչը դեղնած՝
 Որ ամպէ ամպ կը փաթթըւի տըխրամած.
 Կարծես հոգւոյն՝ Աստուած դամբան մ'է դրբեր:
 Կարծես բրբին մէջ քամած է սեւ գիշեր:
 Ո՛հ, այդ արխուրն հիւսեցէք ձեր զըւարթին
 Ձեր շողերուն, պայծառութեան, ժրպիտին. —
 Գարունը իր ըստուերներներուն հետ, տղաս՛ր:
 Է՛ տւելի՛ քաղցրագըւարթ, ներդաշնակ:
 Թերեւս օր մ' այդ սըրտէն արխուր, վըհասոյգ,
 Մարգրիտ բըղխի, արխմար աչքէն՝ արշալոյս. —
 Երբ ժամն հասնի սին փոսուտան լոյս չի՞ տար.
 Ո՞վ գիտէ վաղն, Այսօրը ո՞վ պիտ' գիտնար:

Գեւ տարածամ՝ թող չը չափէ այդ տղան,
 Ձեր աչքին մէջ մըտայլ հոգին Մարդկութեան,
 Այդուն առջի թոյլ շողին պէս՝ որ կանուխ՝
 Կը խեղդըւի մութ վըհի մ' մէջ խորամուխ,
 Էւ դեռ մատաղ՝ թող չը կարդայ ձեր դէմքին՝
 Մարդկութիւնն իր ճիրաններով միասին:

Սիրտ սըրտի առէք, և ձեռք ձեռքի, սիրեւիք,
 Քանզի աշխարհ կոր է, չըլլայ թէ սահիր:
 Գիտցէք սիրե՛լ. մի՛ անարգէք, մի՛ ծեծէք.
 Աստուած մը կայ, ո՛վ եղբայրներ. — Ներեցէ՛ք:
 Ներեցէք դուք, և պիտ' ներուիք յաւիտեան:
 Մեր եղբայրն է՝ դատաստանի մեր մատեանն.
 Ըզզո՛յշ եղէք. օրէնքը ո՞ր կոխկրոսող
 Նոյն օրէնքովը չի դատուիր. — Թողէ՛ք սխ. —
 Ներեւ զգիտցէք և պիտի դուք ապրիք յար,
 Հաւատարիմ մեր հայլին է՝ մեր եղբայր.
 Օր մը Աստուած մեզ անոր մէջ պիտ' դիտէ. —
 Միթէ ո՞ր աչքն, որ թունաւից, պըղտոր է,
 Կ'անդրադառնայ իբրեւ պայծառ արեւակ,
 Ո՞ր արիւն-ձեռքն՝ իբրեւ շուշան ըսպիտակ:

ՄՈՒԽԻՐՆԵՐՈՒՆ ԱՌՋԵՒ

Հիւզն այրեցաւ. — Թըխաթոյր ծո՛ւխը նիւթին
 Կապոյտ գէնիթը սեւցուց.
 Ան, դէպ երկինք, խեղճ մարդերու յոյսերուն
 Ոչընչացումն էր զըծուծ:

Հոփն որ առաջ կը հեծկըլտար ցըրտագին
 Գոյքերուն մէջ դիմակաց,
 Հիմակ անոնց թոյլ մոխրին հետ կը խաղայ՝
 Հեզնող շըշուկ մը ձըգած . . .

Կը մորմոքի ընտանիքն իր ջանքերուն
 Սին փոշիին յանդիման.
 Կու լայ. — անգո՛ւթ այդ հըրդեհումն արցունքո՛վ
 Պիտի ջանար մարեւ ան . . .

Մայրն ըստինքին վըրայ սեղմած մերկ որդին՝
 Աւերին մէջ կը շըբջի.
 Մանկան համար ողջ շապիկ մ' ան կ'որոնէ՝
 Եւ կամ կըտոր մը քուրջի:

Տարարա՛խա մայր, կաթին զուտա՛ս փրթթու՛մին
 Պատըստարան չը մընաց. —
 Յանկարժ ոտքին կը զարնըւի սարսուռով՝
 Օրոցքէն փայտ մը, խանձա՛ծ. —

Ո՛հ, դաժան բոց, ասիկայ բոյն մ'էր սիրոյ՝
 Որ քանդեցիր զայրոյթով,
 Հան, տըժգունած զոյգ մը շըրթունք վրայէ վրայ
 Կը ծըծէին սէր, զորով:

Արդ, մոխրին տակ խեղճերուն կեանքն է թաղուած
 Ա՛լ դամբան մ'է հիւղն իրենց.
 Բախան, որուն աչքն արդէն կապած է Աստուած.
 Փոշի, կըմախք հոն ձըղեց:

Ըսէ, ս'վ Տէր, հիմայ դէպ ո՛ւր պիտ' երթան
 Այդ թըշուառնե՛րը լաւկան.
 Գու որ անոնց տընակն առիր, յոյսն առիր,
 Օ՛ն, ըսէ, ս'ւր պիտ' երթան . . .

Գէթ անձնըւէր գութ չը տըւիր մարդերուն՝
 Որ անոնք հոն կըծկըւին,
 Որ մարդկային սըրտերու մէջ՝ գէթ անոնք
 Խորշ մը գըտնան ջերմագին:

Ո՛ւր պիտ' երթան: — Էրիկն արդէն հիւանդոտ,
 Սերտ մ'ուրկէ ոգը լոկ կ'եւէ.
 Կինը, վատուժ, պինդ շըղթայուած իր վըզէն
 Նիհար, փոքրիկ թեւերէ:

Ո՛ւր պիտ' երթան. — Գահավէժի մը վերեւ
 Իր կեանքը մին կախելու,
 Թէ, յուսահատ, միւսն անպատիւ տան մը մէջ
 Մարուր սէրն իր ծախելու:

Ո՛ւր պիտ' երթան սեւ նոճի այդ ծաղիկներ
 Ճակատագրէն հողմավար,
 Ծուխէն, բոցէն այդ քըշուածները շըլմոր,
 Վէրքի շիթերն այդ թըշուառ: —

... Ե՞րբ պիտի գայ, ո՛վ Տէր, այն օրը վրսեմ. —
 Եղբայրութիւնն Մարդկութեան
 Ե՞րբ իր շրջթան պիտի ձրգէ սըրտէ սիրտ՝
 Մեծ համբոյրտի՞ն՝ յաղթական:

Ե՞րբ հըրկիգեա՛լը չըքաւոր, յուսաթափ,
 Մոխրին վըրայ ինչքերուն,
 Տուրա, վիթխարի Նըքումին տեղ պիտ՛ գըանայ
 Տիեզերական Օգնութի՛ւն:

ՎՇՏԻՆ

Ա

Ինձմէ հեռո՛ւ. ահաւոր է տեսնալ քեզ.
 Գարնան ծաղիկն ուղիսին կըրնա՞յ դէմ դընել.
 Ո՛հ, քեզի հետ ի՞նչպէս կըրնամ չափուիլ ես. —
 Դու արհեստիդ մէջ վարպետ ես և ընդել:

Դեռ նոր դըրի մեծ հովտին մէջ իմ քայլեր՝
 Ուրկէ՛ երկա՞յն ճամբան կ'երթայ նեղնալով.
 Ծայրն է շիրիմն՝ զոր հասակս այս չի տեսներ՝
 Կամ կը տեսնէ միայն սոսկման մը դողով . . .

Քայլիս առջեւ՝ մի՛ վերցընեք այդ հովտէն՝
 Ծաղկի, շողի և ցօղերու պատմութեանն.
 Թո՛ղ որ երկնի յորդ ալիքներն հըրեղէն
 Հոն՝ կապուտակ իրենց ժըպտով հաշտ իջնան:

Ինձի համար խորդենին մի՛ ներ եղիճ,
 Աղաւնին՝ անդդ, ու ջինջ վըտակը՝ հեղե՛ղ.
 Վարդին ծոցէն հանէ պիծակը խայթիչ,
 Մարդն՝ օձին մի՛ կապեր դիմակ մը շըքեղ:

Բ

Նորէն վրրան յարձակեցար բրտօրէն,
Գու, ողջերու գերդ բորենի դժոխային.
Ժանիքիդ մէջ խրրած՝ արիւն կը կաթին
Ծրէններն որս եղած սրբախ մը նախկին:

Կը տեսնեմ. — չն՝ս կըրնար ծածկել աչքերէս
Ձեռքիդ մէջի սրբուական ողբի, արցունքի.
Սրբուական հիւթի մ' (մահացուցիչ՝ թոյնի՛ պէս)
Որ մարմինն յար կը վարակէ հիւժանքի:

Մորթիդ ամբողջ ծակախներէն կ'արտադրի
Յուսահատութիւն և թախծութիւն հոգեկան.
Արտաշնչմանդ մէջ Լըբու՛մը կ'ապրի՝
Որ միշտ ճամբայ կը բանայ ըստ յարձակման:

Վայրի մագիդ աւիրին մէջ ծրփանուա՛
Ես կը տեսնեմ պրտակ մ' հազած արեան զոյն.
Ձոր ինքնակալ Մահը ձօնեց ըստ գըլիտուդ՝
Երբ տուիր անոր թանգ աւարի մ' յըզփութիւնն:

Գ

Քեզ յըզացան փոթօրիկներն աւրող յար,
Թէ քեզ ծընան նաւը փըշրող կոհակներ.
Սեւ հրաբուխի մը սրկորէն՝ զուրս ելար՝
Ուր մեզի դէմ Սասանան քեզ կը գլնէր:

Երբոր Աստուած իջաւ կաւին փրտփրտաց,
Ու ծընաւ ա՛յսպէս հողն՝ ըզմարդ, մարդն՝ ըզկին,
Կը թազէիր պրտուղին մէջ արգիլուած՝
Որ փոքրիկ բան օրէնք դրաւ մե՛ծ աշխարհին.

Բայց ա՛յս գիտեմ՝ թէ ճանչցուցին քեզ ինձի՛
Երբ էակներ փափագեցան որ ապրիմ.
Երբ օրոցքին մէջ մօրըս շիթը Լացի՛
Եկաւ ըլլաւ իմ շիթերուս մրտերիմ.

Երբ աչքս, արբշիս, դիպաւ աչքի մը բոցէ,
Եւ փոքրիկ սիրտս սիրոյ մեծ վիհն իջաւ. —
Ձերդ ծիտ մ' որ դէպ արփուոյն հասնիւ կը փորձէ,
Եւ կամ արփին գրկել Անհունը անբաւ.

Երբ բաշխեցինք յիշատակներ զատուելու,
Եւ մեռաւ մամս, ու եղբայրներս հտեւէն. —
Ձի՛ փաստարան՝ ծերը մանուկը կ'առնու՛
Սուրբ Գատողին դէմն ելլալու նեղ ատեն:

Գ

Ինծի կու գաս սէր տեղուանքներ այցելած. —
Գալուկ դէմքէ՛ն սեւ դազաղի՛ մը հակող,
Հառաչանքէ՛ն որբիկներու, աղքատաց՝
Որոնց համար կը պարզէ ձիւնը սե՛ւ քող:

Հուր ողբերգնե՞րն Իսկիւտարի Սոխակին,
Թէ Յուսահատ Ռէզանաթցւոյն անհուն ցա՛ւն
Ըզրեզ սընոյց, որոնց սիրած գեղն, ինքնին,
Իր օրոցքէն գերեզմանին նայեցաւ:

Կուրծքէ՛ն կու գաս Աւարայրի Պըլպոււլին՝
Թ՛ Խորայէլի Երանելոյն սըրտէն լայն,
Որուն վըրայ փորձութիւնները Գիւլին
Եւ Աստուծոյ համբերութիւնն կըտուեցան:

Ե

Արդ, այդ գոհե՛րբդ կը նընջեն ընդերկար.
Վառ յիշատակ մ' անոնք մեզի ձրգեցին՝
Որ իրենց տեղ պաշարւելով կ'ապրի յար,
Քանզի կեանք կայ՝ որ մահ չունի բընաւին:

Հիմայ չը կան անոնք, շատե՛ր ալ նաեւ՝
Որոնց զըլխուն կեղեքումներդ թափեցիր.
Ինծի՛ կու գաս. — արդէն Լանջըխ ճիշտ ներքեւ՝
Կը զգամ խորնալը թաթերուդ մահացիր:
Սարուռներ

Խընդութեան հետ՝ կեանքս ձեր մէջ կը բաժնէք,
 Աւ է՛ն մեծ մասն, ազա՛հ, դու, դո՛ւ կը խըլես.
 Ա՛հ, զոնէ մի՛ լըմընցըներ այդ ամէնք՝
 Ար ուրիշ աւ չըլլայ թ՛ ընես բաժին քեզ:

Արդէն կը զգամ. — կը խառնակին իմ աչքին՝
 Ներդաշնակուած կապն իրերուն մութ, և ջինջ.
 Արտախ վըրայ փըլատակներ կը սըփոին.
 Կարծես Բնութիւնն ինձ կը դառնայ ցուրտ Աչինջ:

Իսկ դու ինձ չե՛ս ուզեր լըսել. ի՛նչ, ա՛յնքան
 Արշալոյսին պիտ՛ չը սամ փոխը ժըպտին.
 Գեոարուսիկ այս հասակիս խընդութեան
 Օրէնքին դէմ պիտ՛ մեղանչե՞մ աակաւին:

Է՛ր կը խըլես ապագայիս կայծը վառ՝
 Եւ բոցերու ճարակ կ'ընես իմ ներկան:
 Անտառին մէջ չը մընաց ե՛րգ ինձ համար. —
 Ամէն բան դէպ գերեզմաննե՛րը փախան:

2

Պիտի վայրկեանն մը չապրէի քեզի հետ
 Հէզ սիրտըս այդ թաթերէդ դուրս կորզելով.
 Եւ իմ ձեռքով պիտ՛ ընէի կեանքս անհետ,
 Թէպէտեւ ես չըստեղծեցի իմ ձեռքով:

Պիտ՛ չապրէի՛ — եթէ ինձի չըսէին
 Անոնք՝ որոնք ունին տարւոյ խորշոմներ,
 Աւ շա՛տ գիտեն, և ձըգելով ետեւնին
 Արշալոյսներ՝ կ'երթան վըհի մ', ալեհեր.

— « Ճակտին վըրայ, ահօսներուն մէջ վըշտի՛
 կը ցանուի սերմն իտէալին սեպհական. .
 Օր մ' այն հոգին՝ որ ցաւերով կը սոււայտի,
 Պիտ՛ դառնայ վարդը Անհունին խընդութեան »: —

ՎԻՓԱԾԸ

Առանց շունչի վրախա սիրա,
 Առանց ժրպախ սեւ ծաղիկ,
 Արիւններու մէջ, խեղդած,
 Կը ծընանի: — Չի լար. — է
 Լաւ և արձեւ. ուղիքն ափ
 Նետուած քուրջի մ'է նըման: —
 Թըշուան էակ, երբեք իր
 Աչքին մէջ՝ բիբ, կուրծքին՝ իղձ
 Չը Թըրթըռաց. կոյր յոյսիս
 Նըման եղաւ, զոր հոգիս
 Իր վըհէն դուրս կը նետէ՝
 'Իրակ մ' ԸԼԼաԼուՆ համար սոսկ: —

Մընձ մեռել. — ո՛հ, ի զուր
 Մայրդ համբոյրով ըսպասեց
 Շըրթունքներուդ վարդերուն. —
 Անոնք թողմած դուրս եկան.
 Ի զուր հիւսեց երգերով
 Շապիկը սուրբ կընունքիդ. —
 Ան քու պատանդըդ եղաւ:
 Ինչո՞ւ, ըսէ, (թող քեզի
 Մօր մը ծարաւը սիրոյ
 Լեզու հանէ) մեր կեանքին
 Այսպէս ինչո՞ւ փութացիր.
 'Ինչ սաղմըդ լաւ չանցուցած
 Իրեն սուրբ քաղցն իննամսեայ
 Մընող մարմնէն, արիւնէն,
 Ինչո՞ւ համար, կոկոն հունձք,
 'Իէպ օրոցքի մ'ըշտապէն
 Գերեզմանի մէջ ինկար:
 Քեզ ո՞ր ծաղիկը դիւթեց
 Գուրսը, հոս տեղ, և կամ ո՞ր
 Թիթեանիկին ետեւէ
 'Իու փազվըզել ուզեցիր . . .



Ո՛վ տառապանք, — ձեզ համար
 (Ըստէս) ձեզի համար է
 Վիժուկն, աղքատ Յըզիներ,
 Քաղցածութեան, տաժանքի
 Սայլին լըծուած Յըզիներ,
 Անօթութեան ժանիքէն
 Տորչափ ձեր կուրծքը մաշի,
 Պիտ' չունենաք դուք արիւն
 Արեան համար, միտ' մրտի.
 Տորչափ ըլլաք հազար ծանր
 Աշխատութեան սահմանուած՝
 Սեռի բընագղն, աննական
 Համբոյրը ձեզ չարիք է.
 Ձեր արգանդները մէյ մէկ
 Գերեզմաններ պիտ' ըլլան: —
 Մինչդեռ կաթով մը փատուծ
 Ամսէ ամիս, շիթ առ շիթ,
 Կը լեցունին ձեր ըստինքներ.
 Մինչ անգիտակ կը ժրպտիք,
 Երազի մէջ, մանկական
 Սեւ աչքերու, շըրթներու
 (Խօսուն փարդեր) և անոնց
 Սոխակն յաղթող կակազին,
 Խորը, ձեր մէջ, — լնւո ոճիր —
 Սեւ Մահն էակ մը, անձայն,
 Ձեր աղիքով կը խեղդէ: —

ՄՈՒՐԱՑԻԿԸ

Միաչեայ է. անդամաւոյժ՝ մէջքէն փար.
 Գեղնութիւն մ' իր նիհար մարմինն է ծածկած.
 Իր խօթ կեանքին աշնանը մէջ կ'ապրի յար,
 Մինչդեռ անցքին գարուն մըն ալ չէ ձրգած:

Մէգերո՛ւ շող, հիւանդ ծաղիկ եղաիւրի,
 Մարդկութեան մէջ՝ ըստուէր ձրգուած մեր ճակտին:
 Միայնակ է. վըրայէն այս աշխարհի
 Բան մը չառաւ, պիտի չը տայ բան մ'ալ սին:

Երգեանիկ մ'է միայն իր մեծ հարսանութիւնն՝
 Չոր, պատի մ' տակ, մօրն օրհասին նեղ ատեն՝
 Անոր ձեռքէն քաշեց հանեց շըւմորուն,
 Ահարեկած՝ անաէր կեանքին ապրումաէն:

Ո՛վ պիտի այդ գործիքն անոր զըւանար,
 Պակտած աչքին տեղ այդ երկրորդ աչքն հընչող՝
 Չոր արւաւ Տէրն, որպէս զի ան թափէ վար՝
 Գոց բըրին տակ ժողոված արցունքը ճընչող:

Այդ երգեանիկը շատ հին է. գիտէ ան
 Հրեանդ, արխեղծ սերունդներու պատմութիւնն.
 Հին արցունքներ չորցած են վրան, որք եղան
 Պահարաններն իր նըւագած վըշտերուն:

Բարախուն կարծք մ' հան կ'ընէ միշտ ելեւէջ
 Ուրախ շեշտ մ' իսկ եկած չէ իր հեքին քով.
 Բուռ մը արցունք նեաած է Տէրն անոր մէջ՝
 Մակընթացման, տեղատուութեան ծրփանքով:

Փողոցին մէջ երզը կ'երթայ դարձդարձիկ,
 Համբուն ծայրէն մինչեւ տունի մը ետեւ,
 Չը մընալով շատ հեղ անկէ կըտոր մ' իսկ՝
 Գիրգ լանջերու մէկ ժանեակի մ'ալ ներքեւ:

Այդ երգեանիկն իր մ'է որ մեզ կը խօսի՝
 Բիւր ցաւի քիւր լեզու ժողոված իր քերան.
 Կը բանայ այն կեանքերուն քողը մեզի՝
 Որոնք մեր կոյր սաքերուն տակ կը վըխտան.

Ահա՛. —

Վիհ մութ, զագրատեսիլ, ահուելի,
 Փըխոր զեռուն, իրարու վրայ, կարեպէր,
 Չերդ խընըւած պուխպոտներ քըսամուելի,
 Տըժգոյն դէմքեր, արժգոյն աչքեր, անդամներ.

Հառաչանքներ՝ հանդիպած պինդ սրբաներու՝
 Ինչպէս ծովուն թոյլ ծրփանքները ժայռին.

ԵԼԼող սրունքներ՝ սառին վրայ մօ՛տ հաշեղու,
Ինկող գանկեր՝ խորն ըստուերին ու գայոին.

Տապըլտըկող ուսեր՝ որոնք կը հըրեն
Մերին գոց դուռն՝ որուն բընիած ենք նիգեր,
Սե՛ւ փըրփուրներ՝ նետուած թիւրակն ալիքէն՝
Որք կը ցընդին մեր ոտքին տակ. — չե՛նք տեսներ.

Դողդո՛ջ քայլեր՝ մերին քայլին ետեւէն՝
Որուն ճամբան իրենց ճամբայ է միայն.
Տըմոյն այտեր՝ չը բոսորած արեւէն.
Իրաններ ցուրտ՝ սարսուռներու գերեզման.

Աքքե՛ր որ Լոկ, (Գըթածը մերթ մունալով),
Իրկունն, ձեռքին մեր կը սպասեն դողդղազին՝
Թէ պիտ՝ արդեօք արձանագրե՛նք զըթալով՝
« Վաղը » իրենց տետրակին մէջ ապրուտաին:

Օրոցքներ սո՛սկ շիրմի համար խաւարչաին.
Առանց բոցի և համբոյրի մը՝ սէրեր,
Որոնք իրենց դեռ սաղմին մէջ կը մեռնին՝
Ինչպէս չեւած դեռ կոկոնէն՝ ծաղիկներ.

Անդամներ գօս, պակաս դըրուած, և կամ ծուռ,
Ցամբած սըրտեր՝ որոնք վախէն ժանտ Մահուան՝
Նոյն իսկ արդմի մէջ կը պահեն թաքթաքուր՝
Մէկտեղ իրենց ներկային՝ կոյր ապագան.

Կուրծքեր՝ վէրքով և արիւնով պատարուն,
Հազիւ ծընած՝ փոշի դարձած երազներ,
Եւ արցունքներ հեւքով մ'ինկած քուրջերու.
Նըւաղուսներ, կոծեր, դողեր, օրհասնե՛ր.

Ահ՛այս ամէնն ոտքերէն մեր վեր կ'եւլայ,
Եւ, վարանոտ ու դողդոջուն, ճիշտ նըման
Քայլը դնողի մը անհաստատ ճիւղի վրայ,
Կը ծեծէ սնարը մեր նընջող Գըթութեան:

ՄԵՌԱԾԻՆ ՀԱՄԲՈՅՐ ՄԸ

Համբուրեցի: — Մըտերմութեամբ սիրայեղց,
Սիրաս անտեսեց նախ սարսուռն այդ դիակին:
Կը գատուէր ան. հոգիս մեծ փերթ մը ուզեց
Իրմէ յանձնել մահուան այդ սեւ թըռչանքին:

Այդ համբոյրն արդ կը ճամբորդէ ու կ'անցնի
Քերեզմանին մէջէն, մէջէն սեւութեան.

Մեռած ճակատի մը վրայ սիրտ մ'է կենդանի. —
Ծաղիկ՝ նետուած՝ ցուրտ մարմարին շիրմական:

Եւ կը դողան փաթթըւած այդ ճակատին վրայ:
Զինք մահուան այդ ճամբորդին՝ Սէրն է յանձներ.
Եւ Սէրն է խիստ խիստ զօրաւոր. ան կրրնայ
Կայծը՝ մոխրին, ողջը՝ դիակին միացնել:

Ո՛վ համբոյր, դու արցունք մ'էիր շըրթունքի.
Քեզ յըզացայ խոցուած սըրտի արիւնով,
Եւ դամբանի ջահին մրուրովը սուգի.
Քեզ սընոյց կսծն ուռիներուն հոգմախով:

Երբ սիրելի Մեռնողն հեւքոս իր հոգւոյն
Թոփչները, լուռ, կը տարածէր դէպ երկին,
Մինչ իմիններս անոր դէմքին դեղնագոյն
Կ'ամփոփուէին՝ ծընար դու այն վայրկենին . . .

Ո՛վ սէրերու ցայտումն անկեղծ և անանց,
Գիտես այլեւս տպրիլ նոյն իսկ կեանքէ՛ փերջ . . .
Մըտերմական անունի մ' հեա սերտ կապուած՝
Կը հոսեցնես քաղցր յիշատակ մ' հոգւոյս մէջ:

Ուրիշ հազար համբոյրներու մէջէ հին՝
Քու վըրայ սոսկ կը մըտածեմ ընդերկար.
Միւսներն հիմայ սըրտերու մէջ կը հանգչին,
Մինչ, անձնանուէր, դու լոկ դազադ զըրուեցար:

ՅԱՒԵՐԺՈՒԹԵԱՆ ՍԵՄԻՆ

Գերեզման մ'էր, լերան սաքին, գետին մօտ.
 Թափառական քայլերըս գայն զըստան հոտ,
 Երբ կ'երթայի երազուն,
 Իրկունն, հազած արեւին հունկ շողը լաւ
 Սիրարս յանձնած ծաղիկներուն և միտքս ալ,
 Փլթթելու մօտ աստղերուն:

Գերեզման մ'էր: — Խաչ մը անտաշ, քար մ'անխօս.
 Քարն անանուն, և խաչըն ալ՝ անքրիստոս,
 Հոն կը հըսկեն մենակեաց.
 Մին զեանդուած է ձեւքերով մրանիմ,
 Եւ միւսն, երկու մասրի ճիւղեր, սեւ մազի մ'
 Գիտակներովն հոն կապուած:

Այս է բուրն. ու ասոր հետ բընութիւնն
 Որ կ'օրօրէ այդ քունն իբրեւ մայր մ'անքուն:
 Տերեւներու սօսափներ,
 Գետին սղբանքն ու խոշոր բիբը լուսնին
 Մտադրութիւնն հոն կը սպաննեն. հոն երկինն
 Իր նայուածքներն է թափեր:

Ինչ լաւ է հոտ. կարծես թէ դաշտն է հըսկայ
 Ուխտաւոր մ' այդ գերեզմանին, զի տեսայ
 Անմտուկներ ինքնարոյս՝
 Չոր կապած է բնական ոլոս մը՝ խաչին,
 Եւ համբուրող շըրթունքը բոց կակաչին
 Քարին ծրուած սիրայայզ:

Խոնարհեցայ, և հողիս լի աղմուկով
 Դատարկեցի մեռածին լուս սնարին քով. —
 Գիւղի գիշեր մը երբեք
 Այնքան լաւ չի ծըծեր դօղանջը զանգին՝
 Որքան ծրծեց մահուան այդ փոսը լըսին
 Հոգւոյս ճիչերն յունարեկ:

Խոնարհեցայ, և կարծես ինձ հետ իջնի
 Քնութիւնը հոն խոնարհեցաւ, ահաւոր
 Ըստուերին մէջ ծընրադիր.
 Եւ միացաւ իրերուն սիրար սրբախ՝
 Խիզախօրէն ընկըզմեւու համար զիս
 Խորհուրդին մէջ սեւածիր:

Վար, վար. — Լրտէ՛, ճըպուս սիւքե՛ր, լընեցէք.
 Կազադին խորը չի հառնիր ձայնն երբեք.
 Գերեզմանին քարին տակ
 Մայր — Լրութիւնն է բանտարկուած: — Վար, վար, վար.
 Վի՛հ, մութին պէս անյատակ:
 Կը խարխափեն մըտքիս թեւերն. ո՛ր է, ո՛ր

Վախճանողին գացած ճամբան. ո՛հ, ի զուր
 Կը փընտրուեմ հոն, իմ շուրջ,
 Անոր անունն ի՛նչ է, կամ ի՛նչ է անունն
 Անդըրշիրմի Եղածին, ո՛ր է Անհունն,
 Ո՛ր է Խորհուրդն. — Աղջամուղջ: —
 Ո՛հ, դու ո՛վ ես, ո՛վ անծանօթ վախճանած,

Ի՛նչ սրգաւոր քեզ կը բերէ ուխտ կամ լաց
 Ո՛վ, ո՛վ ես դու՛ որ քրիւր
 Երբիմըդ դուս, քեզ զըննապան զաղանիքին.
 Ո՛ր կեանք առիր, և կամ ո՛ր շողն, ո՛ր երկինն
 Այսպ ու շքթունքդ երփնեց հիր:
 Խազմի՞կ մ'եղար՝ որ սիրուհւոյն ծունկին վրայ,

Ուր ժամա Մահն իսկ խենթ սիրահար կը գառնայ՝
 Կը սպաննուրի անդարման.
 Թէ դու հիւժախա արդայ մ'էիր, հէգ գեղջուկ,
 Որ հըրդեհուած իրենց գիւղէն՝ խուսափուկ՝
 Կը մեանի հոս, կէս ճամբան:
 Վըհուկ ձե՛ր մ'ես՝ Թաղուած երգով մը Թովչոս,

Եւ սղրացուած՝ ժամերու մէջ անծանօթ՝
 Իրեն վըհուկ կընաջմէն:
 Կեանքի բաժակդ՝ որ ալ գատարկ կը հըսկէ

Գլխուդ վերեւ, քանի՛ շիթով լեցուեր է
 Տարիքն համրող արցունքէն,
 Խօսէ, ո՛վ ես. — սակայն ո՛վ որ ալ ըլլաս

Թող ես շիրիմըդ համբուրեմ, քանզի այս
 Մեր կեանք — զոհին թաղինն է.
 Քանզի քեզ ա՛լ չեն աղարտեր մեր օրեր՝
 Ուր ապրողն, ո՛հ, մեանագին չափ չի գիտեր,
 Ուր մարդուս չափ վիշտն հին է,
 Ուր մեր զըրթին երկրորդ էջերն են ճերմակ,

Եւ գիտութեան ծառին արմատն հողին տակ
 Դեռ միշտ թաղուած է անյայտ. —
 Դու բարի ես՝ ինչպէս սուրբ զոհն Արեւին,
 Զի մահուան սեւ համբոյրին տակ կը փոխուին
 Ամէն շանթեր՝ ճառագայթ:

Եւ դու սուրբ ես՝ ժրպիտին պէս բընութեան.
 Արշալոյսն իր ցօղը ճերմակ քարիդ վրան
 Ամէն առաու կը թափէ,
 Զերդ արցունքներն՝ որոնք լըռիկ կը կաթին
 Գըրած սիրոյ նամակին վրայ նոր-հարսին՝
 Որուն փեսան գինուար է:

Դու գիտո՞ւն ես. — մըտածումն ա՛լ զանկիդ տակ
 Ճողոպրած է ուղեղէն փուռ ու ցամաք.
 Երակներուդ մէջ հիմայ
 Արիւնի տեղ ճառագայթներ կը սահին,
 Եւ վերնագիրն հին գիտութեանը զըրթին
 Արդ փոխեց ձեռք մը հըսկայ:
 Դու ճակատդ է՛ն կը շոյէ, մերը խաւար. —
 Մեր գիշերն է հոս միջօրէ քեզ համար,
 Անշըրջելի՛ հակոտնեայ:
 Մենք օրոցքին մէջ ըստինքէն մայրենի
 Սիրտ կը լեցնենք, իսկ դու հողի՛դ հուանի
 Գերեզմանին մէջ անգայ.

Եւ կ'ըլլայ հոտ մեր մայրն՝ Աստուած, կաթը՝ լոյս,
Թողլըքելով Տարակոյսն ա՛լ շիրմէդ դուրս

Աշխարհիս հետ միասին: —

Ո՛վ սուրբ մեռնող, ո՛հ, մինչեւ ե՞րբ շըլմորած
Պիտ՝ ճանկըսթենք ահաւոր ամպը՝ առանց

Չայն շերտելու քընաւին:

Խորհուրդին դէմ մենք մինչեւ ե՞րբ, ծընրադիր,
Առկայծ յուսով պիտի գոչենք. — « Վ՛նյս, իջի՛ր . . .
Պատռէ, պատռէ, ո՛վ մըթութիւն, լըռութի՛ւն.

Կարծիք, պատռէ, պատռէ ո՛վ մէզ, անվերջ քուն,

Անդունդներէն մեզի նայող, ո՛վ մեծ աչք՝

Որ չունիս քու բիրբղ, ո՛վ բիր, քու նայուածք:

Մենք հերարձակ քեզի կ'նայինք. ծառերուն,

Աստղներուն, ալիքներուն, ժայռերուն

Մէջէ քեզի, քեզի կ'նայինք. — մերկացիր: —

Դո՛ւ — որուն քօղն է ապագան — մերկացիր: —

Ո՛վ ներքին կողմը դամբանի քարերուն,

Ո՛վ միգամած, ահեղ գիսաստղ՝ որուն

Գլուխն է պահուած ամպի մը տակ յաւիտեան.

Ուրեմըն մենք մեր ուղեղներն ընդունա՛յն

Պիտի ճըզմենք սաքերուդ վրայ պըղընծեայ,

Եւ ընդունա՛յն պիտի նետենք անխընայ

Մոայլ գիշերուան մէջ մեր սըրտերն՝ որ կ'երթան

Քեզի համար մըրբիկներուն քըռնութեան

Դէմ գալարիւ, որ՝ մուրրած խաւարին

Մէջ՝ ժայռերուն դէմ ճըջելով կը բաղխին.

Եւ բուերէն քըշուած, քըշուած լըքումէն,

Խորը, ձորին մէջ կ'ընկըղմին, կ'որոնեն՝ն,

Անկէ մեզի դուրս բերելով, ա՛լ յոգնած,

Հէզ կայծոռիկ մ'աւա՛ղ, արեւ համարուած: —

Ո՛հ, մինչեւ ե՞րբ ըսփինքսային ճակատով,

Դու, ո՛վ Խորհուրդ, պիտի ծաղրես անվըրդով

Առջեզ մեռած մեր խոհն, արծի՛ւ—ողջակէզ.

Ըսէ, խօսէ, պիտի մինչեւ ե՞րբ լըռես »: —

Մինչեւ ե՞րբ ան պիտի լըռէ: — Ո՛վ շերիմ,

Ճակատս ահա քարիդ դըրած կ'ընկըղմիմ

Աղօթքիս մէջ: — Կը յուսամ:

Փանկին ներքե կրակի արբի ամէն բան,
 Հոն հրդեհ կայ, մրտաձուլներըս կու գան
 Քեզի կու գան հրավարամ:

Օ՛ն, սրբազրէ, կամ աւելցուր, կամ ջընջէ —
 Ջերմակ քարէդ ճակատն անցածը ի՞նչ է.

— Խոր լըտութի՛նն, այլ ոչ բառ —

Լաւ. կը հանե՛մ շուրջիդ բոյսերն արմատէն,
 Արտիդ, գանկիդ մէջ անոնք ի՞նչ կը ծրծեն.

— Մարմին, այլ ոչ գաղափար —

Լաւ. վըրայէ՛դ կը թաւալեմ քարն անդին,
 Ըսպիտակ էջ, սրուն միւս հողմն է գըրուած
 Անպատճառ բան մը Մահէն.

Անոր ներքե գաղանիք մ'անշուշտ կը շընջէ.

Սի՛րա թէ հոգի՛. — օ՛ն, ըսէ ինձ թէ ի՞նչ է.

— Երկու հարի՛ճ, այլ ոչ Է՛ն —

Արդ, այն հուժկո՛ւ թեւերովս ես կը բըրեմ
 Հողն, և աչքերս այդ գերեզմանդ նըսեմ
 Ազդահայեաց կը չափեն:

Ո՛վ խորութի՛նն, մութի՛ն ծոցէն ի՞նչ լուսին

Պիտի պոսթիկայ, ի՞նչ հուր-բաներ պիտ' ժայթըին

Յաւերժութեան շըրթունքէն:

— Լըտութի՛նն. — տե՛ս. —

Հողերուն հեա դուրս կու գան

Փուտ սակրասիքը, մընացորդ մարդկութեան,

Որով վանդակ մ' յօրինեց ձեռքը կեանքին

Հոգի կոչուած մեզ անձանօթ փիւնիկին:

Ահա կողերը մերկացած զերդ ճանկեր,

Ահա կըրծոսկրը՝ սրուն դէմ կը բախէր

Իդձն իր ճակատն երակային գարկերով՝

Իրրեւ հեզիկ ալեակին մէջ սուչող հով.

Ահա թեւերն և ուլն անջատ ու լըքուած՝

Որոնք երբեմն, ո՛վ գիտէ, սիգապանձ

Կ' յսխորատային. « Ար ծոնք, բընաւ չենք ծըսիր » . . .

Լիսեոսին հետ ահա սրունքներն անյարիւր՝
 Որք կարճեցին թէ ժայռն իրենց ներքեւ յար
 Պիտի թընդայ՝ քանի որ դեռ, բոցավառ,
 Արեւն արիւնջ կը շարժէր. և ահա
 Չորցած կըզակն, ահա ծընօտն՝ սրունց վրայ
 կը ծաղրէին այտերը վարդն՝ երբոր ան
 կը դաւնար հէզ իբր հիւժախտ սիրտ մը, աշնան.
 Եւ ահա զանկն, ոսկրեղէն թաս՝ ուրկէ յար
 Մարդ կը խըմէր մտածման զինին կենտարար.
 Արդ ուղեղի տեղ հողով է լեցուած ան՝
 Արուն վըրայ չար խորհուրդի մը նըման՝
 Ուոր պառկած օձ մը գլուխն իւր կը ալնկէ,
 Եւ սարսափն հոն սարսափողէ միշտ զուրկ է: —
 Ա՛լ ոչ կեանք կայ, ոչ յոյս, ոչ սէր և ոչ թէն,
 Իր որդնակեր, գօս ջըղերուն վըրայէն
 Ըզգացումն ա՛լ փախաւ, նըման զեփիււսին
 Որ կը սահի տերեւներէն, ողբազին:
 Փոշի՛, աճի՛ւն, խառնորդ մըռայլ, վիթխարի,
 Փըստըներու, մոխիրներու, սրղերու
 Ո՛վ կոյր անդունդ, ալիքին տակ վարդերու: —

. . . կ'իջնան, կ'իջնան: — Ժամանակին ափը, հոս,
 Գերեզմանին ափին ծըռած է. — քանն. —
 Ահա Ադամն, Ներոնն ահա, և Վարդան,
 Սոկրատն է այս, Յարաբքան է, ես, դու, ան.
 Այս ծակծրկուած կողերն իմին կողերս են.
 Իմ աչքերս՝ իմ ոսկրոտիքս հոս կը դիտեն: —
 Մարդը կ'իյնայ. — ո՛ւր. — ահեղ գոգն ովկեանին՝
 Եւ ալիքներն անոր վըրայ կ'համբուրուին,
 Հոն փըռելով ճերմակ փըրփուր մը անվերջ.
 Եւ կ'իյնայ. — ո՛ւր. — երկրիս խորունկ կլափին մէջ՝
 Ու վրան զիրար կու գան գըրկել սեւ հողեր՝
 Հոն թողելով ըսպիտակ քար մը, հրաւէր
 Ծընրադրութեան:

Ժամանակն է խարբալ մ' հին,
 Ժողովուրդներն աւագ՝ որ միշտ կը մաղուին:
 Արտալնդոստ ձայն մ'որուն ամպն է շըրթունք՝
 կը մըւրնչէ. — « Անդունդին. զո՛ւր է արցունք »: —

Եւ թրխաշուրթ խորխորաաին մէջ մըթին՝
 կու գան զիակներ իրարու վրայ կը դիգուին.
 Պապն հօր ներքեւ, ու զաւակին ներքեւ հայր.
 Եւ հոն համբոյրն ա՛լ համբոյրէն չի տաքնար.
 Եւ մօր ըստինքն որդւոյն սառած բերնին վրայ
 կը քայքայուի. կեանքն իր ակէ՛ն կը չորնայ:
 Այրուծին մեծ յաղթանակէն իր գինով՝
 Երբ կը կըտրէր մեծ ձոր մը մէկ ոստուժով՝
 Մահուան փոսն այս՝ լայն կը զբանէ իր չափէն.
 Ո՛վ արհաւիրք. երբ պատերազմն իր թափէն
 Ա՛լ կը դադրի, իր զայրոյթէն փառքն անշէջ,
 Եւ թագաւորն իր կընճիթն ա՛լ վէրքի մէջ
 Մըխըրճեկէն, կը բերէ դաշտը վարդգոյն՝
 Որուն սերմն է՝ դիակ, տարափը՝ արիւն,
 կը բերէ հո՛ս, հոս պարպել իր մարմիններ,
 Հոս լըճացնել իր խօլահոս արիւններ.
 Մահաբեմերն (ուր միշտ պատրաստ Սասանին
 Մորթին վըրայ դանակներն յար կը սըրուին)
 կը պարպին հո՛ս, հոս քաղաքին ճամբաներ.
 Հո՛ս հիւանդի անկողիններն մահաստուեր՝
 Որոնց մէջ հէգ հոգին, Չերմի սընորքէն՝
 կը համարի թէ վարն դազադ կը շինեն.
 Հո՛ս կը նեաէ իր գահն արքայն մուկզին,
 Հո՛ս կը նեաէ լեռնամէջն իր բորենին,
 Հո՛ս Բիւզանդիոնն ու Հռովմն ամէն սօս կեսար. —
 Հո՛ս յաղթ արծիւն իր փետուրներ շանթահար:
 Այս է աշխարհս, ո՛վ Զօրեղներ: —

Դար դարէ

կը թաւալի մըղուած ուրիշ դարերէ.
 Եւ հազիւ դող մ՛ Յաւերժութիւնը կը զգայ՝
 Իբրեւ նեաուէր քար մ՛ սվկեանի մը վըրայ.
 կը պարպուին վարն անթիւ սե՛ւ դագաղներ,
 Մըժեղներու հըսկայ երամ, տարուբեր,
 Անվերադարձ կը կորսուին ձորին մէջ.
 Ահա սիրտ մ՛ ա՛լ չի բարախեր, անկէ վերջ
 Ուրիշ մըն ալ, ուրիշ մըն ալ, զոհ, զոհ, զո՛հ,
 Ժամը ժամին, բոպէ բոպէ: Եթէ, ո՛հ,
 Մէկտեղ բերուին սգաւորներուն արցունքներ,

Ո՛վ Երկինք, քու ցաւման շանթերդ մահարեր
 Կեռ չի՞ն մարեր: — Եւ կը վիժին մարդիկներ
 Քիչերուան մէջ՝ երբ հազիւ հազ է սառեր
 Իրենց քաղցրիկ օրոցքներուն աաքութիւնն,
 Երբ որ աւանդ դեռ չէ սեւցած՝ մատերնուն
 Ամուսնական սուրբ մատանին. և կ'իյնան
 Մեռած, երբ դեռ մեղրալուսինն ըղձական
 Իրեն մահի՛կ վիճակին մէջ կը շողայ,
 Կամ երբ, տարեց, դեռ գիտութեան պըղընձեայ
 Բերանն հազիւ հազ բանալու տագնապին
 Մէջ՝ կը գողան իրենց մատեր . . . կը սառի՛ն:
 Ցաւի, ողբի, ճիչերու մէջ, դէպ ի վար
 Կը սայթաքին. հէ՛գ թըռչուններ նետահար,
 Որ չէք գիտեր հարուածն ուրկէ՛ եկաւ ձեզ,
 Կը սարսըռաք, կը թաւալիք աղէկէզ,
 Եւ թըսիչնիդ ամփոփելով, շըւարած,
 Գլուխնիդ կըծկած թեւերնուդ տակ, լուռ, սառած,
 Չեր երգերուն արձագանդին մէջ, աւանդ,
 Կ'անշընչանաք: Մութը կ'իջնէ միապաղաղ,
 Արտասուաթոր պատանքին մէջ, հողին տակ,
 Արշալոյսի մ'ըսպասելով՝ կը քնանա՛ք . . .
 Կու գայ Քրիստոս, կը մօտենայ ձեր շիրմին,
 Եւ վէրքին մէջ մըխելով մատն երկնային,
 Չերին ճերմակ քարին վըրայ, անայլայլ,
 Արիւն զըրով մ'ան կը զըրէ.

— ՀԱՆԴԵՐՁԵԱԼ:

*

Ամպի մը տակ լուսինն յանկարծ կը մարի
 Կը լըռէ հոջն, ամէն աստղեր մի առ մի
 Ասուպ կ'ըլլան, կ'ըլլան վարդերն ալ՝ վէրքեր: —
 Ո՛վ անանուն շիրիմ, դու որ անտարբեր,
 Ու երազկոտ կը նայիս դէպ ի երկին՝
 Մարդիկ այս օր, ո՛հ, գիր առ գիր լիզեցին
 Այդ բառը քու քարիդ վրայէ սըրբազան,
 Ահա ինչո՞ւ թէ ճերմակ է մնացած ան: —

ՀԻՒԱՆ Դ Է

Ըստուերին մէջ, խանի մ'անկիւնը լըքուած
 Թըշուա՞ն պանդուխտ, հիւանդ է.
 Խոնաւութիւնն անոր մարմինը շիթ շիթ
 Գերեզմանին կը նեաէ:

Բըփշէկ չունի. եղած դըրամն ալ հաստա.
 Տաւը ծանր է. — զըթութիւնն:
 Հոն չը կայ սիրտ մ'որ բարութիւնը քամէ
 Անոր ծարաւ շըրթներուն:

Եւ ինքն իրեն մըտերիմներ կը ստեղծէ
 Տընորքներուն մէջ ջերմին.
 Իր վիճակին կարեկցող մէկը չունի
 Բայ ի մամուկը որմին:

Մըթընշաղին մէջ կը մարմըրի, կը հիւծի
 Մըթընշաղի մը նըման.
 Լըտութիւնն հոն կարծես դագաղ մը կ'երկնէ. —
 Օրոցը՝ տունէն գերեզման:

Երիտասարդ է տակաւին, և փեսայ.
 Պոլսէն մինչեւ Աան հետու,
 Հոն՝ հաց կ'ուզեն հարսն ու ծընողը. գի՛նը կ'ուզեն.
 Դեռ շատ շուտ է մեռնելու:

Ան իր արիւնն իր քըրտինքով կը շահէր . . .
 Տէ՛ր, ի՞նչ սըրտով կը կտարես
 Թեւն՝ որուն վրայ կը կըսթընին մանուկներ
 Եւ ծընողքներ ձիւնաղէս:

Դուրսն արեւին, գեփիւտին տակ կ'ուռճանան
 Բախտաւորներն աննիազ.
 Արտին մէջ աստղն աւշի ելքին կը ժըպտի.
 Տէ՛ր, զինքն ինչո՞ւ կը մոռնաս:

Այդ բազուկներն աշխատանքի համար են՝

Ո՛չ մահուան դէմ կրողուհուս —

Բախար խուցին մէկ անկիւնէն կը խրնդայ

Ոճի ժըպտով մ'ահարկուս:

Պիտի մեռնի. — խիտա մահացոռ հիւանդցաւ.

Եւ պատանքին մէջ երբեք

Պիտ' չը տանի սիրելիի մ'արցունքներն

Ու սեւ ուխտերն յուսարեկ:

Պիտի մեռնի. — և իր բընիկ լուսնին տակ,

Հարսը սիրոյ ծարաւով՝

Պիտի գուր տեղ անոր գալու՞ն ըսպասէ . . .

Խեղճ փանուհի, ապահով

Յոյսի ամէն խոստումներու վայելքին՝

Կը ծիծաղիս աստղին հետ.

Մինչդեռ կեանքի երկընքին վրայ կը զըծուի

Շանթը շողին զուգահեա:

Որո՞ւն համար շուշանն ու փարդ փոխ կու տան

Իրենց միացումն՝ այտերուդ.

Ինչո՞ւ Անայ լինն աստղերով կը վառի

Նախանձեղով աչքերուդ.

Որո՞ւն համար հաջողիդ տակ կը պահես

Բճբաստաններն համբոյրին

Վայն, հէ՛ղ ծաղիկ, պիտի համբորդ մը զուժէ.

— « Մէկ աչքը բաց թագեցին »: —

ԱՒԱԶԱՆԻՆ ԶՈՒԿԵՐՈՒՆ

Մըտածողի մը նըման

Զուրին միջեւ կը շըրջի՞

Ա՛լ զըծուած է ձեր սահման,

Ո՛վ լողակներ խատուտիկ:

Հոս պիտի ա՛լ չը զըտնար

Անհուն, կապոյտ այն աշխարհ,

Որուն յորձանքն ու վըտանդ

Կը կըտրէիք հեղնարար:

Չերին ճարպիկ թեւերով՝
Ազատութիւն, գուարթութիւն
Կը զըրկէիք անվերդով,
Անգէ՛տ՝ նենգոյ խայծերուն . . .

Արհեստն արդ ձեզ կը պատէ. —
Աւազան մ' հին, ձեզի նեզ,
Շատըրուան մ' ալ կրանիակ,
Եւ փոքրիկ ժայռ մը մէջ տեղ՝

Որ զործ մըն է ձեռքերու: —
Այս է ահա ձեր աշխարհ,
Ամբողջ այս է, ո՛վ ազու
Բանտարկեալներըս թըշուառ:

Երբ կը կայտաէք ջուրին վրայ՝
Կը զուարճանայ անխըռով
Անձնասէր մարդն՝ արծաթեայ
Պըղպըջակներն զիտելով:

Ո՛հ, ի բընէ չար է ան,
Իր հաճոյքին իր փառքին
Կ'ուզէ զոհել ամէն բան,
Բըռնաւորն է աշխարհքին: —

. . . Այս սեւ ժայռին խոռոչներ
Չեր շիրիմներ պիտ' ըլլան,
Ուր կ'երկարին բողբոջներ
Բաղեղներու ցիրուցան.

Ուր ջրերուն թրթրումունք
Կու գան բախիլ մեղմօրէն,
Ցընցըզկեւով արտասուք՝
Ողբ ու հանգիստ կ'եղերգեն:

Ո՛վ իմ դըժբախտ անմեղներ,
Ջիշտ նըման է աշխարհս ալ
Չեր այդ տեղին: Դէտ ի վե՛ր
Կը ջանայ միտքս իմ ելլալ.

Կ'ուզէ ուրիշ մէկ աշխարհ
Ան գըտնելու, ուր անհուն
Ազատութիւնն իշխէ յար'
Եւ անխարդախ բարութիւն:

Ասկայն ի գուր: Ասկ բանասոց
Գրծուծ նիւթեր կան չորս զիս'
Որ թրուիչներս ազամոց
Կը ջախջախեն և հոգիս:

Ասկայծ յոյսով մ' ս'եր կ'երթամ. —
Կ'երթամ նոյն տեղըս գացած. —
Հոս, կեանքն ու սեւ գերեզման
Իրարու ձեռք են տըւած:

Որ մը ձեզի պէս ե'ս ալ
Պիտի իյնամ, յուրա, անշունչ,
Մուսցօնքի մէջ մըռայլ.
Հոս ամէն բան է անուրջ:

Պիտ' լօս բլլար զուր, ևս հող.
Բայց ինձմէն էք կըջանի'կ,
Ձի վըրանիդ միշտ լացող
Գէթ շատըրուան մը ունիք:

ԱՐԻՒՆՈՏ ՃԻՒՂԸ

— « Հոն, ի՞նչ է ան' որ շուրթին վրայ ջըրերուն
Ինկած կու գայ, օրօրակումով մը կու գայ.
Մըխրըճելով մերթ ծըփանքին մէջ գնայուն'
Կարծես բոցերն իր կը մարէ' ճակտին վրայ
Վառուած կարմիր արեւմուտէն . . .

« Այսպէս հեւրոս, դանդաղօրէն,
Ո՛վ մեծ գետին ջուրերն, արդեօք ձեր շըրթունք
Ի՞նչ կը բերեն' որք լեռներու ապալեր
Քըղանցքներուն միշտ սըփուկով արատաւոր'
Կարծես ցաւէ մ' կը խածխըծեն եզերքներ:

« Ո՛հ, լրտաթի՛ւն. — ձեր լեզուէն չեմ հասկընար.
Մի՛ մըրմընջէք ինձի բաներ հագեյոյց,
Այլ, կըրկնակի վազըով, հասէք սըրավար՝
Նըման իմ կոյս կարօտակէզ օրերուս՝
 Որոնք անձայն կ'անցնին կ'երթան . . .

« . . . Կանաչ ճի՛ւղ մ'է ուղեւորն այն՝
Որ կը ծըփայ անդաստական, մուսրուն,
Յրցուած մէջ սեղ փըրփուրներուն ըսպիտակ,
Ինչպէս լանջընս վրայ կը ճօճի սուր դաշոյնն,
Որ բաժանուժը մըխեց խոր, դըժընդակ. —

« Ո՛վ արմաւի թափառական ճիւղն, ըսէ՛,
Մէջն անէյոյզ ճամբորդութեանդ ի՞նչ տեսար.
Կամ թէ սըրախ՝ որ միշտ յոյսէն կը խուսէ,
Եւ պաշտումի մը բացական կու լայ յար,
 Արդեօք դու ի՞նչ լուր կը բերես . . .

« Մարտի փառքին աւեալի՞սն ես,
Մարտին՝ որ միշտ դաշտերէ դաշտ, լեւնէ լեւ
Կատուած կ'ունայ՝ ինչպէս որոտն երկնի վրան.
Հորիզոնին, ուր հազիւ իմ նայուածքներ
Կը թափառին, ան կը ձրգէ քօղ մ'արեան:

« Քաջամարտիկըս արդեօք ի՞նչպէս կ'ընէ
Ըսպանանքին մէջ սուրերու փայլակին,
Կամ վրիժաուս նիզակներէ, աէգերէ
Եւ լախտերէ ձեւակերպուած՝ մահածին
 Անտաններուն դէմ յանդիման . . .

« . . . Ո՛հ, ի՞նչ մտածում է այս դաժան. —
Ըրի՞ն այնպէս, որ իր վեհ կուրծքն ինձ համար
Այլեւս կրթեք չը բարախէ, չը յուսայ,
Որուն վըրայ հանգիստ կ'առնէր զըլուխս յար.
Լոկ այտերո՞ւս տակ ապրած էր անիկայ:

« Թէ, իր ձեռքէ՞ն կու զաս, բաների ալէխաով.
Ի՞նչ, պարզեցի՞ն սահմանէն ներս թըշնամւոյն
Գրօշակը սուրբ՝ զոր շինեցի իմ ձեռքով.
Կամ յաղթութեան ըրի՞ն հանդէսը ցընծուն.
 Խըմն՞ց ան իր և իմ կենաց:

« Ան պաշտպանե՞ց՝ բաղանձրւած
Մընուզըններու հէզ մանուկներն անտերունջ,
Կամ դիւցազներ՝ ինկած միայն սեւ բախալն.
Անոնց աչքին, թուրին փայլով թաթաւուչ,
Իր զրթութեան փայլն ալ ցըցո՞ւց վեհօրէն: —

« Եթէ իր խրտխա կորդակին հեռ միասին
Յսխորաացի՞ր, կամ պրճնեցի՞ր յաղթական
Լանջապանակն. եթէ խիզախ ճակատին
Կու ծրխացիր, եկուր, եկուր սրբախ վրան
Աճեցընեմ համբոյրով քեզ »: —

Ըսաւ: — Եւ բոց արեւուն պէս,
Որ մերթ կ'իջնէ ալիքներուն ծովին լուրթ
Կոյն հակեցաւ, մեղմիկ, ջուրին վրայ պայծառ,
(Անդրադարձած թովիչ դէմքին իր՝ անփո՞յթ)
Եւ վեր հանեց խուսափուկ ճիւղը դաւար:

Ու վեհերոտ, ինչպէս եղնիկ մը սիրուն,
Սուր ճիւղով մ'եռ ընկրրկեցաւ ան յանկարծ.
Մէկդի նեանց ձեւքերէն ճիւղը՝ որուն
Յից ծայրին վրայ, աւանդ, էին չորացած
Կարմիր արեան մը նեաուածքներ . . .

Անոր համար գետը բոթբեր
Լրանց կարծես, չը ժրպտեցաւ արեգակ.
Խաշնահաւն ա՛լ չերգեց երգն իր խընդութեան.
Կարծես զըրին կարմիր դազաղ մ' աչքին տակ. —
Յատակը՝ տէգ, և կափարիչը՝ վահան: . . .

ԶՈՐՍ ՏԱՐԵԿԱՆԻ ՄԸ ՆԱՄԱԿԸ

Այս նամակն իմ եղբայրս է զրեր. քանզի էակ՝
Որ փոքր է դեռ. Էն իր համար քոյ չունի.
Իր առջեւ դեռ մեծ գաղանխքն է անդիմակ.
Երանութեան ամէն երկինք՝ հոլանի՛:

Մերթ վարդերու, թըռչուններու անուրջէ
Ոգիներուն հեռ կը խօսի անարգել.

Փորրի՛ք ձեռքով թիթեանիկներ կը կանչէ,
 Կ'ուզէ սասուկերն երկնի գաշտէն հաւարել:

Երկամեայ էր՝ երբ գասուեցանք արխրալի,
 Մեկնուածին զիս զխակց ապշած ու երկա՞յն,
 Թէ ինքը է՞ր կ'երթար, ես է՞ր կը մնայի,
 Եւ, ս'հ, լացա՛ւ. մարդն էր՝ շնորհքին տակ մանկան:

Այդ կը զրբէ: Այդ նամակն է՛ս կ'ըմբռնեմ.
 Ձայն կ' հասկընայ ի՛մ սիրտս լսի յաւաթափ,
 Իրբև թէ այդ զիրն անձանօթ ու նրսեմ՝
 Մենք նայն տակն զբանէկներ, նո՛յն բզկացմամբ:

Հարիզն մ' հարկ է որ, ինքն ա՛լ պաղ աղօտ,
 Ձայն տայ նընջող արշալոյսին. Ա՛լ, ժամն է, . . .
 Զեփուս մ'որ թոյլ հունտին հրծծէ. Տո՛ւր ծրղօտ:
 Մայր մ'որ արդուն ըսէ. Քալէ՛ . . . Հայր մ'որ՝ Գրէ՛: —

. . . Եւ սա թուղթին մանուկ մ' հակեր է ըմբուշ,
 Մանկան վրայ հայր մը՝ ժրպտելով պեխին տակ. —
 Ա՛յսպէս կ'իջնէ արշալոյսին ամպ մ' անուշ,
 Արշալոյսն ալ ձիւնօտ գաշտին ըսպիտակ:

Ու զրբեր է: Տարօրինակ նրշաններ,
 Գիծե՛ր՝ որք ինձ թրւին երազ բեկբեկուն,
 Փըպիաներով ցանուած ըրտուած մեղաններ,
 Բիծեր՝ զըրուած մանկան թափով մը նըկուն:

Սա միևարե մըն է զեւ կէս մընացած՝
 Ուր չ'ամփոփուեր հոգւոյ մ'աղօթըը համակ.
 Հոն ծուռումուռ խաչափայտ մ'է գեանդուած՝
 Ուր կը գամուի խեղանդամ մարդ մը մինակ:

Հոս տեղ թըռչուն մ'ուրուազըծուած է, լըսի՛կ,
 Արուն երգերն իր շըրթուշներն են զողցեր.
 Անդին կայ յօնք մ'առանց աչքի, թափառիկ,
 Իսկ ասդին աչք մ'առանց յօնքի, մերկ, անաէր:

Սա կիսկատար զըմբէթ մըն է — ձիւնի վրայ —
 Որ կը սքօղի ամպի մը աակ մեւանէ.

Վերջապէս հո՛ն զոց կոկոն մ'է անիկայ՝
 Որ, վարն, անոր քստորագիրն կը զընէ:

Եւ հս ճաճանչ մը ասոնց մէջ կը զըտնեմ.
 Պասկերական գըրութիւն մ'է՝ մենք որով
 Արբնանք կարգաւ խորհուրդ—մանուկը վրտեմ՝
 Մեր մութ երկնի՝ աստղ մ'օրէ որ զընելով:

Պիտ՝ տարիներ կազմեն ամէն գաղափար՝
 Երազը խոկ յօրինելով օրէ օր.
 Մանուկը մարդ պիտի ըլլայ, զիծը՝ բառ,
 Տըրուելով կրօնն՝ մարդուն, բառին ռա՛նաւոր:

Ան՝ այժմեան այդ գաղափարներն մի քանի
 Ժողովեց երկրէս (Թէ երկընքէն չի բերեր).
 Ժողովեց իր մօր զըրկէն — զըպրո՞ց կենդանի —
 Գըզուող սիւքէն, ծագիկներէն տարուբեր:

Սոխակն ուսոյց երգել, լաւ՝ փուշը վարդին.
 Ամփոփ թառած սատրակն ըսաւ. Ար նիրհեն:
 Բարձին ծաթոյ լուսնակն ըսաւ. Ար ժըպտին:
 Իր քունն հըսկող մայրն ալ ըսաւ. Ար սիրե՛ն:

ԱՆՀԱՒԱՏԸ

Սեւ ազոսաւի մը հաւեւէն, զառ ի վար,
 Արբշիտ հոգւով մ'ան կը վազէր ուժղնօրէն.
 Հեշտանցի երգ մ'իւր շըրթունքին կը թըրթոար՝
 Որ կը թովէ գաղտագողի քեզ իրե՛ն:

Անոր քսի. — « Հո՛ն, սղաւնին տեսար ան՝
 Որ ազաւին ներհակ թոխըրով կը սուրհար.
 Սուրբ ազաւնին Անբըծութեան, Գիտութեան
 Ու երկնային Միջոցներուն լուսատարբ »: —

Ուղղեց այնպէս հեզնող ժըպիտ մը ինծի՝
 Որ 'սեւ կ'ուզէր. — « Ատա՛նկ կ'ընես »: — Եւ գարձաւ:

Ու կը վազէ՛ր, երբոր նորէն գոչեցի
Ետեւէն իր խօլ վայրէջքին սրբարշաւ.

— « Տեսա՛ր ծագիկն՝ որ հակառակ վազքիդ՝ ան
Քեզ հակառակ կ'անցնէր կ'երթար, չը թոմսի՛ւ.
Ծաղիկն Յոյսի, Ջրշմարառութեան, Հեզութեան,
Որ է փրթիւն Արշալուսին փրթիւն ձիւն »: —

Ան յուսահատ փոյթով մ' հեծեց դամբօրէն.
— « Տեսայ . . . Ո՛ւշ է: Ո՛հ, սարերսս բուսին էջ
Կեցընել ա՛լ զըծուար է այս գարվարէն »: —
Եւ գահվիճե՛ց, գերդ կոյր, կեանքին ճամբուն մէջ:

ԵՐԱՋ ԵՒ ԽՈՋ

Պատկած էի. խոր լըռութի՛ւն. գիշեր էր . . .
Ջրրազս իողէ պատերն արիւն կը նեղկէր:
Ծանրացաւ մրափ մ'աչքերուս.

Մրտածումնի՛րս երազի մէջ սուզան,
Եւ իրերէս ամէն ճաճանջ լուսական
Կողերուս վրայ՝ արւին խոյս:

Սեւ դէմքի մ' հեա ձեռք մը տեսայ մահճիս բով. —
Կարծքիս զըրաւ մատերը բոց եղունգով,
Սընդիկի պէս խորամուխ: —

Փայտ կըտրեցաւ լեզուս. վախցայ շէկ աչքէն:
Ես ճանչցայ զայն. — սատաններուն ամենէն
Կատապին էր մ է՛ն թախ:

Բացաւ բերանն՝ որուն մէջ լինող միայն կար.
Իր ակունները խորաակուած էին վար
Իյնալու օրն երկրնքէն . . .

Ըսաւ. — « Արբա՛կ. սրբաճկ քարշել ես եկայ
ԶԱյն՝ որուն աեղն իմ աեղրս պէտք է ըլլայ.
Տո՛ւր, ինձի՛ ասւր սէրդ իրեն »: —

Անկողնիս մէջ թալթըլեցայ, ու երկու
Զեռքով՝ սարսուռն բրոնեցի թեւն ահարկու՝
Ինձմէ անդին մըզելով:

Մաքառեցայ Անոր համար, անկրօններ.
Խածեցի ձեռքն՝ որ Չինքն ինձմէ կ'անջատէր.
Իր ստիւիսն արիւնով՝

Ներկեցի շուրթս, և անցուցի ծարաւս հուր:
Դեւն երեսիս կատղած պոռաց. — « Տեղի՛ տուր՝
Թէ չէ ըզքեզ կը խեղդեմ.

Թողերուդ տակ կը ճըմլեմ սիրտդ անխընայ.
Ճերմակ սաւանդ վաղը կարմիր կը դառնայ.
Մահը կ' հանեմ քեզի դէմ:

« Ագուաներու կեր կու տամ այդ սեւ աչքերդ.
Քաղցած օձի բերաններու երակներդ
Կը յանձնեմ ես. — տեղի՛ տուր:
Կը գողնամ քարն գերեզմանիդ վըրայէ,
Որպէս զի մա՛րդ ըզքեզ բընաւ շարտաւուէ.
Անգութ եմ, տե՛ս. — տեղի տուր »: —

Պիտի չը տա՛մ: — Կըսմբանցի, կըռփեցի
Թեւն՝ որ սօկրերս կը խորտակէր զերդ խեցի,
Եւ մատերովս անխընայ,
Բըզիկ բըզիկ ճանկըռթեցի դէմքն անոր,
Դողդըղացի, տառապեցայ քըբտնաթոր,
Եւ սուր ճիչով մ'արթընցայ . . .

Ա՛հ, արթընցայ: — Եւ միտքըս շուտ մ'ըշտապեց
Սըրտիս վըհին. դեռ Ան հոն տեղ էր, անեղծ,
Եթէն արեւի նըման Չերմ,
Դեւն եղունգով լանջըս շերտած էր տեղ տեղ.
Ուրախ էի՝ որ եղայ զրահ մ' արիւնհեղ
Անոր համար, Անոր դէմ:

Ո՞վ պիտ' կըրնար փետել հանել Չայն սըրտէս՝
Ուր (ինչպէս աստղը կապոյտին ծոցէն ներս)
Ագուցուած է անջրան խոր:
Իր խարիսխներն ալի՛ք մըն ալ չի շարժեր,
Չի անհունին և բընութեան են կառչեր
Անոնց ճանկե՛րը հըզօր.

Վասըն զի իր սուրբ Էռնիստանն հաստատման՝
 Բիւր բիւր աստղեր մէյմէկ հրաշէկ գամ եղան,
 Եւ իր հետն ենք մէկ խըմոր.

Վասըն զի սուրբ Աւետարանն իր ամէն

Մէկ էջով՝ միշտ ծորեց անոր երակէն

Արի՛ւն մ'արեանս մեղաւոր: —

*

. . . Անդունդ մ'է Ան զոյգ որկորով անսահման՝
 Որոնց մէկէն զուրս կը պոռթկայ Ապագան

Անցեալ եղած միւսին մէջ,

Եւ, կեդրոնն, ի՛նքը ներկան է, որուն շուրջ

Ժամանակն իր ճիշտ ոլորտովն, անմըտունչ,

Կ'ընէ անդուլ ելեւէջ.

Եւ այսպէս, մեր աչքէն, մըտքէն իսկ անդին,

Ան՝ իրեն չափ, իրեն միջեւ, իւրովին,

Է յաւիտեան և անհուն.

Ան՝ Ամբողջն է, որուն անունն պարծանքով

Կը յանձնէ այս մաքուր թուղթին սըրտիս ծով՝

Որ իր հայլին է արովուն.

Թող զըրաշարը դողդոջէ՛ երբ անոր

Անուան տառերն իյնան ձեռքին տակ անզօր.

Չը շարէ՛ ծուռ կամ անտաժ . . .

Եւ մամուլն ալ՝ այդ անուան վրայ բըրտօրէն

Թող չը ճընշէ՛ թէ չէ կ' հերձի սեւ կուրծքէն,

Վասըն զի ան է. — Աստուած: —

